ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ԱՐՏԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հոկտեմբերի 3-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 21-ը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչության ինտեգրված սոցիալական ծառայություններ բաժնի փորձագետ Հասմիկ Վեզիրյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ.

- պատրաստել եմ քաղաքացիների դիմումների, այդ թվում առցանց ստացված դիմումների, ինչպես նաև ՀՀ վարչապետի, ՀՀ նախագահի աշխատակազմերից և այլ մարմիններից ՀՀ ԱՍՀՆ վերահասցեագրված քաղաքացիների դիմումների պատասխանները և ապահովել դրանց համապատասխան ընթացքը,
- պատրաստել եմ մի շարք պաշտոնական գրությունների նախագծեր՝ նախարարություններ, գերատեսչություններ և կազմակերպություններ ներկայացնելու համար, ինչպես նաև ՀՀ վարչապետի աշխատակազմից ստացված հանձնարարականների, այլ պետական և ոչ պետական մարմիններից ստացված գրությունների պատասխանների նախագծեր,
- մասնակցել եմ «Ծրագրերը որպես սոցիալական որակելու չափանիշները և ընթացակարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի N 169-Լ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 7-ի N 435-Լ որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության, «Հայաստանի

Հանրապետության հողային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի և այլ նախագծերի մշակման աշխատանքներին,

- մշակել և պաշտոնական շրջանառության մեջ եմ դրել «2022 սեպտեմբերի 13-ից Հայաստանի Հանրապետության տարածքի նկատմամբ Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ ագրեսիայի հետևանքով վիրավորում (վնասվածք) ստացած կամ հոգեկան առողջության խնդիր ձեռք բերած զինծառայողների սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1924-Լ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2082-Լ որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 27-ի N 90-Լ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 8-ի N 148-Լ որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության, «Կացարանի կարիք ունեցող ընտանիքների կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը պետական աջակցություն տրամադրելու նպատակային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը,
- մասնակցել եմ ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի N 169-Լ որոշման շրջանակներում իրականացվող ծրագրի շահառուներին հավաստագրեր տրամադրելու աշխատանքներին,
- իրականացրել եմ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1924-Լ որոշման շրջանակներում քաղաքացիներից ստացված դիմումների ուսումնասիրություն և ապահովել դրանց համապատասխան ընթացքը,

- վարչության պետի հանձնարարությամբ կազմել եմ գրություններ, տեղեկանքներ և այլ փաստաթղթեր,
- վարչության պետի հանձնարարությամբ կատարել եմ բաժնի գործառույթներից բխող այլ աշխատանքներ:

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ

ՀԱՍՄԻԿ ՎԵՋԻՐԱՅԱՆ

Կատարված աշխատանքները գնահատում եմ գերազանց:

Մոսեսի Ա. Հարությունյան